

Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Տաշիր համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռք բերում:
Մարզ	Լոռի
Համայնքը /համայնքները	Տաշիր խոշորացված համայնք:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 163 կմ է, մարզկենտրոն Վանաձորից 53 կմ:
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	01.01.2023թ. պետեզիստրի տվյալների համաձայն 28098 մարդ: Տաշիր՝ 11795, Մեծավան՝ 5629, Կաթնառատ՝ 978, Արծնի՝ 432, Ապավեն՝ 167, Գոգավան՝ 75, Ձորամուտ՝ 498, Պաղաղբյուր՝ 73, Մեղովկա՝ 399, Նորաշեն՝ 1445, Բլագոդարնոյե 262, Գետավան 91, Դաշտադեմ 220, Լեռնահովիտ 1550, Կրուզլայա Շիշկա 117, Ջյունաշող 160, Մեղվահովիտ 119, Միխայլովկա 814, Նովոսելցովո 163, Նորամուտ 24, Պետրովկա 294, Պրիվոլնոյե 867, Սարչապետ 2107, Սարատովկա 418 բնակիչ:
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Արծնի, Ապավեն, Գոգավան, Ձորամուտ, Պաղաղբյուր:
Բարձր լեռնային համայնք /բնակավայր	ՈՉ:
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	ՈՉ:

<p>Համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տնտեսությունը,</li> <li>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,</li> <li>- ռոտզման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ռոտզվող հողատարածքների տոկոսը,</li> <li>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել</li> </ul>	<p>Տաշիր: Տաշիր բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 99%, բոլորը ԼԵՂ և էներգախնայող լուսատուներ են: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տնտեսությունը շուրջօրյա է: Բնակավայրում կոյուղուց օգտվում է բնակչության 35%-ը, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:</p> <p>Ներբնակավայրային ճանապարհային ցանցի երկարությունը-59,5 կմ,  Ասֆալտբետոն-36.4 կմ,  խճային 32,82կմ,  գրունտային- 163,63կմ,  տուֆով սալարկում- 9,03 կմ,  Լուսավորություն- 191,22 կմ:</p> <p>Մեծավան  Մեծավան բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 80%, որից ԼԵՂ և էներգախնայող են 968 լուսատուները: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տնտեսությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են:</p>
---	--

Էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե  
նչ

Գազամատակարարման հասանելի է բնակչության 90%-ին:  
Կաթնատատ: Կաթնատատ բնակավայրը ապահովված է  
լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային  
լուսավորությունը կազմում է 90%, ԼԵԴ և Էներգախնայող  
լուսատուներ չկան: Ջրամատակարարման համակարգը հասանելի  
է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը  
շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը  
անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության  
90%-ին:

Արծնի: Սահմանամերձ բնակավայր է: Արծնի բնակավայրը  
ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի  
գիշերային լուսավորությունը կազմում է 80%, առկա է 6 ԼԵԴ  
լուսատուներ: Ջրամատակարարման համակարգը հասանելի է  
բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը  
բնակչության մի մասի համար օրվա մեջ 2 ժամ է, մյուս կեսի  
համար 3 օրը մեկ՝ կես ժամով: Բնակավայրում բացակայում է  
կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի  
է բնակչության 40%-ին:

Ապավեն: Սահմանամերձ բնակավայր է: Ապավեն բնակավայրը  
ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի  
գիշերային լուսավորությունը կազմում է 70%, բոլոր  
լուսատուները Էներգախնայող են: Ջրամատակարարման  
համակարգը հասանելի է բնակչության 100%-ին, տևողությունը՝  
շուրջօրյա: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը  
անջրդի են: Գազամատակարարման արտաքին համակարգը  
ամբողջությամբ՝ 100% կառուցվել է 2023թ. -ին, սակայն ներքին  
ցանցի լիարժեք ապահովման համար անհրաժեշտ է 421,9մ  
երկարությամբ գազատարի կառուցում:

Գոգավան: Սահմանամերձ բնակավայր է: Գոգավան բնակավայրը  
ապահովված չէ լուսավորության համակարգով: Բնակավայրում  
ամբողջական լուսավորվածության համար անհրաժեշտ է 8 հատ  
լուսատու: Առկա է ջրամատակարարման համակարգ, որը  
հասանելի է բնակչության 100%-ին 1 օր առկա/1 օր առանց  
սկզբունքով: Բնակավայրում բացակայում է կոյուղին:  
Բնակավայրի հողերը անջրդի են: Գազամատակարարման  
համակարգը բացակայում է:

Չորամուտ: Սահմանամերձ բնակավայր է: Չորամուտ  
բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով:  
Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 85%, որից  
Էներգախնայող են 43 լուսատուները: Ջրամատակարարման  
համակարգը հասանելի է բնակչության 100%-ին՝ 1 օր առկա/1 օր  
առանց սկզբունքով: Բնակավայրում բացակայում է կոյուղին,  
հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է  
բնակչության 100%-ին:

Պաղաղբյուր: Սահմանամերձ բնակավայր է: Պաղաղբյուր  
բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով:  
Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 90%,

բոլորը ԼԵԴ ն էներգախնայող լուսատուներ են: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 99%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման համակարգը բացակայում է:

Մեդովկա բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 50%, ԼԵԴ ն էներգախնայող լուսատուներ չկան: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Նորաշեն բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 80%, ԼԵԴ ն էներգախնայող լուսատուներ չկան: Գիշերայի լուսավորության լամպերը տեղադրված է ՀԷՑ- ի հենասյունների վրա: Անհրաժեշտ է կառուցել նոր գիշերային լուսավորության ցանց՝ 1,2 կմ երկարությամբ: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին՝ 1 օր առկա/1 օր առանց սկզբունքով: 2024 սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է Պետրովկայից Նորաշեն բնակավայրի արտաքին ջրագծի ցանցի կառուցում, մոտավորապես 1700մ երկարությամբ: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Բլազոդարնոյե բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 90%, ԼԵԴ ն էներգախնայող լուսատուներ չկան: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Գետավան բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 90%, ԼԵԴ ն էներգախնայող լուսատուներ չկան: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Դաշտադեն բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 50%, որից էներգախնայող են 35 լուսատուները: Կարիք կա գիշերային լուսավորության ընդլայնման 45 լուսատուներով: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին, սակայն կարիք կա ջրագծի ներքին ցանցի նորոգման 14 կմ, ջրատարի մաքրում 12 կմ: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման

համակարգը բացակայում է:

Լեռնահովիտ բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 100%, ԼԵԴ և էներգախնայող լուսատուները կազմում են ամբողջի 60%-ը: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչությանը: Ջրամատակարարման տնողությունը օրական 5-6 ժամ է: 2024 թ. սուրվենցիոն ծրագրով նախատեսվում է անցկացնել 800մ երկարությամբ ջրագիծ, որպեսզի ապահովվի բնակչության խմելու ջրի հասանելիությունը: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Կրուզլայա Շիշկա բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 40%, ԼԵԴ և էներգախնայող լուսատուներ չկան: Կարիք կա լուսավորության համակարգի արդիականացման և ընդարձակման: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տնողությունը օրական 5-6 ժամ է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Ջյունաշող բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 90%, բոլորը ԼԵԴ և էներգախնայող լուսատուներ են: Կարիք կա լուսավորության ցանցի ընդարձակման ևս 25 լուսատուով: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տնողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման համակարգը բացակայում է:

Մեղովկա բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 50%, ԼԵԴ և էներգախնայող լուսատուներ չկան: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տնողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Մեղվահովիտ բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 100%, ԼԵԴ և էներգախնայող լուսատուներ չկան: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տնողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման համակարգը բացակայում է:

15.Միխայլովկա բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 85%, բոլորը ԼԵԴ և էներգախնայող լուսատուներ են: Կարիք կա լուսավորության ցանցի ընդլայնման և արդիականացման: Ջրամատակարարման համակարգը գտնվում է ոչ բավարար վիճակում: Կենտրոնական փողոցի ջրագծից դեպի բնակչի տուն ելքերի անորակ վիճակ, կարիք կա երկրարդական փողոցների ջրագծի ցանցի արդիականացման: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Նովոսելցովո բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 50%, ԼԵԴ և էներգախնայող լուսատուները կազմում են ամբողջի 50%-ը: Կարիք կա լուսավորության ցանցի

ընդարձակման և արդիականացման մոտ 1,7 կմ երկարությամբ: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 85%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է, սակայն կարիք կա նոր ջրագծի կառուցման : Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման համակարգը բացակայում է:

Նորամուտ բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 100%, բոլորը ԼԵԴ և էներգախնայող լուսատուներ են: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման համակարգը բացակայում է:

Պետրովկա բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 100%, ԼԵԴ և էներգախնայող լուսատուներ չկան: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին՝ շաբաթվա մեջ 4 օր 24 ժամյա տևողությամբ: Կարիք կա խմելու ջրի ներքին ցանցի խողովակաշարի փոխարինում նորով : Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 50%-ին:

Պրիվոլնոյե բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 100%, որից ԼԵԴ և էներգախնայող են 140 լուսատուները: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 93%-ին:

Սարչապետ բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 100%, որից ԼԵԴ և էներգախնայող են 450 լուսատուները: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Սարատովկա բնակավայրը ապահովված է լուսավորության համակարգով: Բնակավայրի գիշերային լուսավորությունը կազմում է 70%, բոլորը ԼԵԴ և էներգախնայող լուսատուներ են: Ջրամատակարարման համակարգը հասանելի է բնակչության 100%-ին: Ջրամատակարարման տևողությունը շուրջօրյա է: Բնակավայրում բացակայում է կոյուղին, հողերը անջրդի են: Գազամատակարարման հասանելի է բնակչության 100%-ին:

Համայնքը ծրագրային հայտով նախատեսել է ձեռք բերել 2 ոլորտի զարգացման համար անհրաժեշտ տեխնիկաներ՝ բնապահպանության և համայնքի բարեկարգման:

Ծրագիրը համահունչ է նաև Տաշիր համայնքի 2022-2027թ. հնգամյա զարգացման ռազմավարությանը, ըստ որի կոմունալ սպասարկումը և սանիտարական մաքրումը, ճանապարհների բարեկարգումը, հեռագնա արոտ տանող ճանապարհների խճապատումը համարվում են համայնքի տնտեսական զարգացման գրավականներից մեկը և ընդգրկված է համայնքի առաջնահերթությունների շարքում:

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

Նախատեսվում է համայնքային կարողությունների էական ընդլայնում, համայնքի բյուջեն համալրելու լրացուցիչ աղբյուրների համատեղում համայնքի ներքին կարիքները բավարարելուն գուզընթաց: Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք մաքուր, բարեկարգ և գրավիչ համայնք, կմեծանա համայնքային բյուջե հավաքագրվող եկամուտների ծավալը: Ծրագրի շահառուներն են Տաշիր խոշորացված համայնքի բնակչությունը, համայնքում գործող հանրային ծառայության ենթակառուցվածքները՝ (դպրոցներ,

մանկապարտեզներ, առողջապահական հաստատություններ, առևտրային կազմակերպություններ, բանկային մասնաճյուղեր և այլն), համայնքի տարածքում գործող հանրային սննդի, խոշոր, մանր ու միջին բիզնեսի և սպասարկման ոլորտի օբյեկտներ:

Տաշիր համայնքը առանց ներդրումային ծրագրերի աջակցության չի կարող ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկական միջոցները, ֆինանսական սուղ միջոցների պատճառով, սակայն պատրաստակամ է և ունի բոլոր հնարավորությունները տեխնիկական միջոցները երկարաժամկետ շահագործելու, պահպանելու և ճիշտ նպատակին ծառայեցնելու համար:

Տեխնիկական միջոցները իրենց հիմնական ծառայությունը մատուցելուց բացի վճարովի ծառայություն կմատուցեն նաև համայնքի տարածքում և տարածքից դուրս գտնվող մասնավոր հատվածի կազմակերպություններին և հարևան համայնքներին իրենց կողմից իրականացվող բարեկարգման աշխատանքների համար(համաձայն նախնական պայմանավորվածության): Ծրագրի առաջարկի նախապատրաստման և ձևավորման ընթացքում բոլոր շահառուների շրջանում իրականացվել են հանրային քննարկումներ (ներկայացվել են ծրագրի անհրաժեշտությունը, էությունը, նպատակը, ծրագրի իրականացման դեպքում Տաշիր խոշորացված համայնքում լուծվող խնդիրները:

Կոմունալ սպասարկման և սանիտարական մաքրման համար կարևորագույն տեխնիկական միջոցներից մեկը ջրցան մեքենան է, ինչի ձեռք բերումը կնպաստի համայնքում կանաչ տարածքների որակյալ պահպանմանը, ինչպես նաև համայնքում փողոցների և մայթերի մաքրմանը:

Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել հատուկ տեխնիկական միջոցներ՝ Տաշիր համայնքի սանիտարական մաքրման, աղբահանության և այլ կոմունալ ծառայությունների մատուցման աշխատանքների որակյալ կազմակերպման համար:

1 միավոր էքսկավատոր JCB 3-CX հիդրոմուրճով

1 միավոր ջրցան մեքենա GAZ;

Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին

Տաշիր համայնքի առաջիկա 5 տարիների անմիջական ռազմավարական նպատակներնից մեկն է ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ, որոնց ապահովումը այսօր անհնար է առանց համապատասխան տեխնիկական միջոցների:

- Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք
1. Հանրային տարածքների բարեկարգում,
  2. Բարեկարգ և խճապատ գյուղական ներբնակավայրային և միջբնակավայրային փողոցներ



3. անվտանգ երթևեկություն,  
 4. երեկոյան ժամերի պատահարների թվի կրճատում:  
 նոր 2 տեխնիկական միջոցներով հագեցաց 24 / Տաշիր, Մեծավան, Կաթնառատ, Արծնի, Ապավեն, Գոգավան, Ձորամուտ, Պաղաղբյուր, Մեղովկա, Նորաշեն, Բլագոդարնոյե, Գետավան, Դաշտադեմ, Լեռնահովիտ , Կրուզլայա Շիշկա, Ջյունաշող , Մեղվահովիտ , Միխայլովկա , Նովոսելցովո , Նորամուտ, Պետրովկա, Պրիվոլնոյե , Սարչապետ, Սարատովկա / բնակավայր:

Ծրագրի իրականացման նպատակն է ունենալ Տաշիր համայնքի 24 բնակավայրերի համար նախատեսված տեխնիկական միջոցներ, որոնք կնպաստեն համայնքի բարեկարգմանը և զարգացմանը:

Տաշիր համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռք բերում:  
 Այս աշխատանքները կյանքի կոչելու համար`

- Կկազմակերպվի հանրային լսում ծրագրի ներկայացման և բնակիչների կողմից առաջարկների ներկայացման համար
- Բնակիչների հետ համատեղ կկազմվի փողոցների այն ցանկը, որոնք ունեն առաջնային լուսավորության կարիք
- Բնակիչների հավանությանը ծրագրային գաղափարի արժանանալու պարագայում կկազմվի նախնական ծրագրային առաջարկ
- Տաշիրի համայնքապետարանը 2024 թվականի բյուջեով կնախատեսի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ,
- համայնքը կստանա ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ` սուբվենցիաներ,
- կիրականացվի Գնումների մասին ՀՀ Օրենքին, գնումների հետ կապված ՀՀ Կառավարության որոշումներին և օրենսդրական այլ ակտերին համապատասխան, կկազմակերպվեն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և այդ փաստաթղթերին համապատասխան, աշխատանքների կատարման գնման գործընթաց,
- կկատարվեն ծրագրով նախանշված աշխատանքները,
- կապահովվի աշխատանքների տեխնիկական և հեղինակային վերահսկողություն, ինչպես նաև վերահսկողություն համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից,
- աշխատանքների ավարտից հետո շինարարական կազմակերպության, համայնքապետարանի, տեխնիկական, հեղինակային վերահսկողների և նախագիծը կազմողների միջև կիրականացվեն հանձման-ընդունման աշխատանքներ:
- Տեղնիկական միջոցների գնառաջարկների հարցում
- Հաղթող կազմակերպության հետ կկնքվի պայմանագիր
- Տեխնիկայի մատակարարում (2 տեխնիկական միջոց/ սարքավորում)

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները

- Սպասարկման երաշխիքների տրամադրում:
- Տեխնիկայի շահագործում:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի

Տեղնիկական միջոցները կառավարվելու է Տաշիրի համայնքապետարանի կողմից և ծառայելու է համայնքի բնակիչներին: Ծրագրի իրականացման արդյունքում ներկա կունենալ սպասարկման հիմնական միջոցների արժեքը կավելանա երկու անգամ: Բնակչության համար հնրավորություն կընձեռվի տեխնիկայի մատչելի գնով օգտագործումը: Համայնքի տեխնիկայի պարկի կավելանա 2 անուն տեխնիկաներով, իսկ գումարային առումով՝ 75.000.000 դրամով:

Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա

Շահառու են հանդիսանում Համայնքի բոլոր բնակիչները:  
 Համայնքն ունի 28606 բնակիչ:  
 Հայտով ներկայացված տեխնիկական միջոցները միառոտ չեն, ուստի ծրագրի շահառուներն են՝

- Հեռագնա արոտներից օգտվող 20-30 ֆերմերային տնտեսությունները,
- 5000 և ավել զբոսաշրջիկները,
- 1 տուրիստական տեղեկատվական կենտրոն,
- 28606 խոշորացված համայնքի բնակիչներ:
- նշված տեխնիկաների սպասարկող տարածքը հանդիսանալու Տաշիր համայնքի ողջ տարածքը 50 000 հա

Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը

Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում նախատեսվում է ստեղծել 2 հիմնական աշխատատեղ՝ վարորդներ:

Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը

Նախորդ տարվա բյուջեն՝ 2493298.7 հազ. դրամ. Ներկայացնել նախորդ տարվա 2023թ. բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

	Պլանը	Փաստացին	Տոկոսը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝		1-ին եռ. 266,379,6	
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	1158566,0	-/-	
- Սեփական եկամուտներ	363025,3	67235,7	93,1
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	968416,4	0	
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	2354237,8	330234,8	

- Վարչական բյուջեի ծախսեր	1158566,0	179151,8	
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	1195671,8	151082,9	
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝			
- ճանապարհաշինություն	308123,0	53142,1	
- ջրամատակարարում	90000	0	
- փողոցային լուսավորություն	153150,0	13640,0	
Բնակարանային շինարարություն	398170,0	15518,1	
Կեղտաջրերի հեռացում	-/-	-/-	
- գյուղատնտեսություն	26019,0	26019,0	
ՔՏՍ	-	-	
-մշակույթ	88127,8	16405,2	
-կրթություն	20000,0	0	
-ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	122082,0	34602,8	
-հողի օտարումից մուտքեր	-15000	-3639,6	
Այլ հիմնական միջոցներից օտարումից մուտքեր	-5000	-4604,6	

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

հազ. դրամ.  
Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

2024	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝	
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	2154189,0
- սեփական եկամուտներ	1146689,0
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	326689,0
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	1007500,0
- Վարչական բյուջեի ծախսեր	2276189,0
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	1148689,0
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝	
--ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	354500,0

-նավթամթերք և բնական գազ	-/-
գյուղատնտեսություն	370000,0
-ճանապարհային տրանսպորտ	-
Կեղտաջրերի հեռացում	-
Շրջակա միջավայրի պահպանություն	10000,0
Բնակարանային շինարարություն	-/-
ջրամատակարարում	250000?
Փողոցների լուսավորություն	-/-
Այլ	
-մշակույթ	150000.0
-կրթություն	3000.0
-հողի օտարումից մուտքեր	-5000.0
Այլ հիմնական միջոցների օտար	-5000.0

Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվա բյուջեն՝ 2154189.0 դրամ.

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարվա բյուջեն՝ 2237794.0 դրամ

Ներկայացնել ծրագրի իրականացման և իրականացման տարվան հաջորդող տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտները և ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից նախատեսված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով

2024	Ծրագրի իրականացման տարի 2024	Ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարի 2025
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի, այդ թվում՝	2154189.0	2237794.0
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	1146689.0	1165794.0
- Սեփական եկամուտներ	326689.0	335794.0
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ		1072000.0
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝	2276189.0	2399794.0
- Վարչական բյուջեի ծախսեր	1148689.0	1167794.0
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	1127500.0	1232000.0
Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված		

միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝		
--ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	354500.0	461000.0
գյուղատնտեսություն	370000.0	180000.0
Շրջակա միջավայրի պահպանություն	10000.0	12000.0
- ճանապարհաշինություն	-	
- ջրամատակարարում	250000	410000.0
- փողոցային լուսավորություն		
- Բնակարանային շինարարություն		
--մշակույթ	150000.0	180000.0
Կրթություն	300000.0	
- հողի օտարումից մուտքեր	-5000.0	-8000.0
Այլ հիմնական միջոցների օտար	-5000.0	-3000.0

Համայնքի 2023թ-ի բյուջեի նախատեսված ընդհանուր մուտքերը կազմում է 2154189.0 դրամ, որից վարչական բյուջեի մուտքեր՝ 1146689.0 դրամ

Որից՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 384350.0 դրամ / իր մեջ ներառում է ապարատի պահպանման՝ աշխատավարձ, գործուղումներ, կոմունալ վճարումներ, կապ, տրանսպորտային նյութեր, համակարգչային ծառայություններ և այլ ծախսեր/

Պաշտպանություն – 3000.0

Տնտեսական հարաբերություններ – 14000.0 դրամ / իր մեջ ներառում է գյուղատնտեսության, տրանսպորտի և ճանապարհային բնագավառում իրականացվելիք ծախսերը /

Շրջակա միջավայրի պաշտպանություն – 127000.0 դրամ / իր մեջ ներառում է աղբահանության և սելավատարերի մաքրման, կեղտաջրերի հեռացման ծախսեր /

Կոմունալ ծառայություն – 186500.0 դրամ / իր մեջ ներառում է ջրամատակարարման և լուսավորման ծառայություններ /

Առողջապահություն – 0

Մշակույթ – 61935.0 դրամ / , ՀՈԱԿ-ի պահպանման ծախսեր /ՀՈԱԿ-ում գործում է մշակույթի տուն և գրադարան

Կրթություն – 133000,0 դրամ /ներառում է նախադպրոցական և միջնակարգ կրթության բնագավառի ծախսեր/

Սոցիալական պաշտպանություն – 8500.0 դրամ / համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն /

Համայնքի ծրագրի իրականացման տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված բյուջետային մուտքերի (ներառյալ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով նախատեսված մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկ- ներով

	Պահուստային ֆոնդ՝ 141764.0 դրամ:  Նշված ծախսերի հետ զուգահեռ միայն բյուջեով հնարավոր չէ իրականացնել Տաշիր համայնքի սույն ծրագիրը:
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝  - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,  - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,  - _____ ինժեներատեխնիկական հետազոտության ծառայության արժեքը՝ _____ դրամ,  - _____ տեխնիկական _____ հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,  - _____ հեղինակային _____ հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,  - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,  ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/տրոգման դեպքում՝ _____ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	75.000.000 ՀՀ դրամ (100%)
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	41.250.000 ՀՀ դրամ (55 %),
Այլ ներդրողներ	
Ծրագրի իրականացման տևողությունը	Մկիզբը 01 հունվար 2024 թ. , Տևողությունը 7 ամիս
Ծրագրի ծախսերը	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է  1. 1 միավոր _____ Էքսկավատոր _____ անվավոր տրակտոր/Էքսկավատոր/ JCB 3CX - 42.000.000ՀՀ դրամ: 2. 1 միավոր ջրցան մեքենա GAZ- 33.000.000 ՀՀ դրամ:
Ամսաթիվ	03.05.2024թ.:

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Հայարփի Կիրակոսյան

Հեռախոսահամար՝ +37477818568

Էլեկտրոնային փոստը՝ hayarpi.kirakosyan@bk.ru

---

Համայնքի ղեկավար



Է. Արշակյան